

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՍՈԿՐԱՏԻ**

**NAHĠ AL-BALĀĠA-Ն ՈՐՊԵՍ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ**

**Է. 00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան – 2026**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Դավիթ Արտաշեսի Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Արշակ Պողոսի Փուլոյան

պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր  
Ալեքսանդր Վիլենի Սաֆարյան

Առաջատար կազմակերպություն՝

Մատենադարան Մ. Մաշտոցի անվան  
հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2026թ. փետրվարի 27-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2026թ. հունվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ. գ. թ., դոցենտ



Ա. Ա. Փաշայան

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Nahğ al-balāğā-ն (այսուհետ/նաև՝ Նահջ ալ-բալաղա) առաքինի չորրորդ խալիֆ, շիայական առաջին իմամ, հավատացյալների էմիր Ալի իբն Աբի Տալիբի (600-661թթ.) խոտբաների (թվով 241 քարոզ, ճառ, հրահանգ), դիսալանների (թվով 79 ուղերձ-նամակ) և հիքմանների (թվով 480 ասույթ, իմաստնություն) մի ընտրանի է, որը հավաքվել և կազմվել է որպես մեկ ամբողջականություն Աբբասյանների խալիֆայության (750-1258 թթ.)՝ Բուլիների (945-1055 թթ.) դինաստիայի կառավարման շրջանում, բաղդադյան միջավայրի հայտնի բանաստեղծ և շիա գիտնական Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի (970-1016թթ.) կողմից 1009/1010 թ.:

Նահջ ալ-բալաղան՝ որպես աղբյուրագիտական, պատմական, կրոնական և գրական ժառանգության օրինակելի մի նմուշ, շատ արժեքավոր է թե՛ բովանդակությամբ, և թե՛ ձևով ու ոճով: Այս ընտրանի ժողովածուն առաքինի չորրորդ խալիֆ, շիաների համար հավատացյալների էմիր, շիա առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի (7-րդ դար) և հավաքող ու գրի առնող հեղինակ Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի (10-րդ դար) ժամանակաշրջաններում գրական ավանդույթում արդի ժանրային կառուցվածքով արտահայտված Ալլահի, մարգարության, իշխանության (իմամաթ), մարդու և աշխարհի ընկալման իմացության և գիտելիքի արտացոլումն էր: Ալ-Շարիֆ Ալ-Ռադին այս համընդգրկուն աշխարհայացքը մեկ ամբողջական հավաքածուի մեջ ներառելու համար Ալի իբն Աբի Տալիբին պատկանող խոսքերից ընտրում է հոետորության/ճարտասանության՝ բալաղայի տեսանկյունից լավագույնները և կարևորագույնները:

Nahğ al-balāğā-ն՝ որպես պատմա-քաղաքական, պատմա-գրականագիտական, կրոնական, աստվածաբանական և արժեքանական աղբյուր միջնադարից մինչ օրս շարունակում է մնալ Ղուրանից հետո ամենակարևոր աղբյուրը շիա մուսուլմանների համար:

**Թեմայի արդիականությունը:** Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է միջնադարյան արաբամուսուլմանական աղբյուրների, պատմության, մշակույթի, ավանդույթի, շիա իսլամի կրոնագաղափարական հիմքերի և կրոնադավանաբանական ուսմունքի ուսումնասիրությունների անհրաժեշտությամբ և կարևորությամբ հատկապես սկսած 1970-ական թթ. վերջին քառորդից՝ պայմանավորված Իրանի իսլամական հեղափոխության և 1979թ. Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծմամբ: Շիա իսլամի ուսումնասիրությունների աճը հանգեցրեց շիա իսլամի՝ որպես առանձին գիտաճյուղի ձևավորմանը:

Ներկայիս ժողովրդագրական վերլուծությունները գնահատում են, որ շիա մուսուլմանները կազմում են աշխարհի մուսուլման բնակչության (1.8-2.0 մլրդ.) մոտավորապես 10-13%-ը՝ տարբեր հաշվարկներով կազմելով 200-260 միլիոն<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով շիա իսլամի ազդեցության գոտուն անմիջականորեն հարող տարածաշրջանում և պատմական, քաղաքական ու մշակութային բազմաշերտ հարաբերություններ ունենալով իր հարավային հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ, ինչպես նաև հաշվի առնելով վերոնշյալ տարածագոտու երկրներում հայկական համայնքների առկայությունը (չնայած վերջին երկու տասնամյակում անկայունություններին զուգահեռ անընդհատ նվազում է նրանց թիվը), կանգնած է շիա իսլամի կրոնական աշխարհայացքի, սուննի և շիա քաղաքական և կրոնական մտածողության ձևավորման օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև դավանաբանական համակարգի և պատմական զարգացման գիտական ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության առաջ: Այս առումով շիա իսլամի համակարգված ուսումնասիրությունը Հայաստանում գիտական արդիական խնդիր է, որն ուղղված է ոչ միայն իսլամագիտական և արևելագիտական ուսումնասիրությունների ընդլայնմանը, այլև ազգային անվտանգության, արտաքին քաղաքականության, միջկրոնական և միջմշակութային երկխոսության զարգացմանը և տարածաշրջանային համագործակցության ռազմավարական հիմնավորման ամրապնդմանը՝ ձեռք բերելով ոչ միայն տեսական, այլև կիրառական նշանակություն:

**Ուսումնասիրության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է ներկայացնել իսլամագիտության և արևելագիտության բնագավառում շիա իսլամի կարևորագույն աղբյուրներից մեկի՝ շիա առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբին վերագրվող մեծանուն բանաստեղծ և կրոնական հեղինակություն Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից կազմված ժողովածուի՝ Նահջ ալ-բալադա աղբյուրի միջգիտակարգային ուսումնասիրություն՝ հիմնվելով նաև մինչ այժմ առկա և մեզ հասանելի գիտական աղբյուրների ու հետազոտությունների արդյունքների վրա:

Աշխատանքը նպատակ ունի բացահայտել իմամ Ալիի ժառանգության նշանակությունն ինչպես դրա ձևավորման բանավոր փուլում (7-րդ դար), այնպես էլ այս տեքստի հետագա իմաստավորման և զարգացման ժամանակաշրջանում ընդհուպ մինչև Նահջ ալ-բալադայի ձևավորումը (10-րդ դար) և դրա դերն այսօրվա

---

<sup>1</sup> Mapping the Global Muslim Population,

<https://www.pewresearch.org/religion/2009/10/07/mapping-the-global-muslim-population/> [հասանելի է 01.12.2025]:

շիայական՝ մասնավորապես իննսաշարիական (տասներկու իմամական) մուսուլմանների շրջանում:

Ինչպես անհնար է առանց Մուհամմադ մարգարեի հադիսների (խոսքերի, արարքների և լուրիայի ձևով փոխանցված ավանդությունների)՝ ուսումնասիրության բացահայտել սուննիական իսլամի կրոնաիրավական դպրոցների արժեքանական համակարգը, այնպես էլ անհնար է առանց Նահջ ալ-բալադայի և իմամների խոսքերի ու խաբարների (իմամների կողմից պատումներ) ըմբռնել շիայականության՝ մասնավորապես տասներկուական իմամության արժեքանական հիմնարար ուղեհիշները, ինչպես նաև իմամության ինստիտուցիոնալացման հիմքերն ու զարգացման գործընթացը:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը ենթադրում է բազմաշերտ հարցադրումների քննություն, որոնց պատասխանների որոնման համար առաջադրվել են հետևյալ հետազոտական **խնդիրները**:

Ուսումնասիրել իմամ Ալի Իբն Աբի Տալիբի դերը իսլամի ծագման փուլում, նրա կերպարի ընկալման տարբերությունները սուննիական և շիայական ավանդույթներում, ինչպես նաև ներկայացնել իմամ Ալիի նշանակությունը իմամական շիա իսլամի կրոնադավանաբանական ուսմունքի ձևավորման և զարգացման համատեքստում:

- Վերլուծել իսլամի սկզբնավորման շրջանում բանավորից գրավոր տեքստի վերածման գործընթացը՝ Ալի իբն Աբի Տալիբի գործունեության պատմական համատեքստում:

- Քննության առնել Բուիների դինաստիայի կառավարման ժամանակահատվածի՝ այսպես կոչված «շիայական վերածննդի» պատմա-քաղաքական, սոցիալ-մշակութային և կրոնադավանաբանական իրադրությունը, երբ շիայական ավանդույթի ներսում տեղի էին ունենում խորքային փոփոխություններ:

- Բացահայտել «երկու հեղինակների» կյանքի և գործունեության հիմնական հանգրվանները, քաղաքական և կրոնական միջավայրերը՝ ցույց տալով նրանց դերը շիայական աստվածաբանական և կրոնական գիտելիքի ստեղծման և ձևակերպման գործում՝ ընդգծելով 10-րդ դարում Ալ-Շարիֆ Ալ-Բադիի կողմից նման ժողովածու կազմելու քայլի կարևորությունը:

- Քննության առնել Նահջ ալ-բալադայի հեղինակության շուրջ միջնադարից մինչև մեր օրերը ձևավորված կասկածներն ու գիտական հարցադրումները՝ «հեղինակ-գրող-հավաքական հեղինակություն» մոտեցման շրջանակում:

- Վերլուծել Ալի իբն Աբի Տալիբի քարոզներ, ուղերձներ և իմաստուն խոսքեր մեկ ամբողջական ժողովածուում հավաքելու Ալ-Ռադիի շարժառիթները, ինչպես նաև ժողովածուի հետագա ընկալումների փոփոխությունները միջնադարից մինչև ժամանակակից շրջան:

- Ուսումնասիրել աշխատության ժանրային կառուցվածքը, բովանդակությունն ու հոետորության ընտրության հիմնավորվածությունը՝ պատմա-աշխարհագրական, ժամանակային (7-ից 10-րդ դարեր), ինչպես նաև կրոնա-քաղաքական և գաղափարական համատեքստերում:

- Իրականացնել ժողովածուի առանձին բաժինների տեքստաբանական վերլուծություն և դրանցում առկա բովանդակային համադրումներ, որոնք ժողովածուն դարձնում են մեկ ամբողջություն՝ դիտարկելով դրանք շիա իսլամի և մասնավորապես տասներկու իմամական դավանաբանական հիմնասյունների ձևավորման և ամրապնդման գործընթացի շրջանակում:

**Ատենախոսության ժամանակագրական շրջանակները:** Նահջ ալ-բալադայի ուսումնասիրությունը անխուսափելիորեն առաջ է բերում «տեքստի ժամանակագրության» խնդրի վերհանման անհրաժեշտությունը: Նահջ ալ-բալադան Ալի իբն Աբի Տալիբին վերագրվող խոսքերի ժողովածու է, այսինքն՝ իսլամի ծագման շրջանի սկզբնաղբյուրային բնույթի տեքստ, որը շուրջ երեք դար անց, նույն ավանդույթի շրջանակներում պահպանելով իր արդիականությունը, սակայն ենթարկվելով որոշակի արեբացիաների (փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում նշանակալի աղավաղումների, այլ միևնույն ավանդույթի շրջանակներում նյութի ադապտացման մոդելներ), ստանում է գրավոր ձևակերպում շիա գիտնական Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից:

**Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը:** Նահջ ալ-բալադան, որպես ի սկզբանե բանավոր շրջանառված, սակայն հետագայում գրավոր ձևակերպված աղբյուր, ուսումնասիրվում է միջգիտակարգային մեթոդաբանության շրջանակում: Հետազոտության ընթացքում կիրառվում են աղբյուրագիտական, պատմահամեմատական և պատմաքննադատական, տեքստաբանական մեկնաբանման, գիտական գրականության վերլուծության, ինչպես նաև արժեքանական, կրոնագիտական և նկարագրողական մեթոդները:

Առանձնահատուկ կարևորություն է տրվում պատմահամեմատական-քննադատական և համադրական վերլուծության գործիքակազմին, վերլուծության են ենթարկվում շիա կրոնագետների մեկնաբանությունները, սուննի հեղինակների քննադատական մոտեցումները, ինչպես նաև արևմտյան ակադեմիական հանրույթի պատմական, տեքստաբանական և միջգիտակարգային ուսումնասիրությունները:

Նահջ ալ-բալադա ժողովածուի երեք տարբեր ժանրերի՝ խուտբաների (քարոզ, ճառ), ոխսալաների (ուղերձ-նամակ) և հիքմաների (իմաստնություններ, ասույթներ) տեքստաբանական վերլուծության միջոցով փորձում ենք վեր հանել բավականին բարդ և բազմաշերտ տեքստի բոլոր շերտերը և նոր լույսի ներքո ներկայացնել հեղինակ-կազմողի՝ տեքստի կազմության չափանիշների ընտրության և ժողովածուի հիմնական նպատակադրումը:

**Ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը:** Առաջին անգամ հայ գիտական շրջանակներում իրականացվում է շիա իսլամի անկյունաքարային աղբյուրներից մեկի՝ Նահջ ալ-բալադայի համակարգված ուսումնասիրություն՝ դիտարկելով այն ոչ միայն որպես պատմա-մշակութային, կրոնական կամ գրական հուշարձան, այլև որպես շիա իմամաթի (աստվածային նախախնամությամբ ումմայի առաջնորդության շնորհումը Ահլ ալ-բեյթին՝ Ալի իբն Աբի Տալիբի և Մուհամմադ մարգարեի դուստր Ֆատիմայի ժառանգներին) քաղաքական, գաղափարական և բարոյական ընկալումների ձևավորման կարևորագույն աղբյուր: Աշխատանքում Նահջ ալ-բալադան վերլուծվում է իր պատմա-քաղաքական պատմա-գրականագիտական և արժեքանական համատեքստում՝ հատկապես Բուհիների դինաստիայի կառավարման շրջանի շիա կրոնա-գաղափարական ինստիտուցիոնալացման գործընթացների լույսի ներքո:

Ատենախոսության կիրառական նշանակությունն արտահայտվում է նրանով, որ հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտագործվել շիա իսլամի պատմության, իսլամական քաղաքական մտքի և կրոնական գաղափարախոսությունների ուսումնասիրություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական դասընթացներում և ընդհանուր կրթական ծրագրերում՝ նպաստելով շիա իսլամի սկզբնաղբյուրների վերաբերյալ հայերեն ակադեմիական գրականության հարստացմանը:

Ատենախոսությունը նաև հետաքրքիր կարող է լինել ընթերցողների լայն շրջանակի համար, քանի որ այն հնարավորություն է տալիս հասկանալու իսլամի շիա ճյուղի վաղ շրջանի պատմական համատեքստը, հետագա ձևավորումը և 10-րդ դարում դրա ինստիտուցիոնալացման ճանապարհը, ինչպես նաև այդ գործընթացների շարունակական կապը ժամանակակից իրողությունների հետ:

Սույն հետազոտությունը կիրառական նշանակություն կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության անմիջական հարևանությամբ շիա իսլամ դավանող մի շարք երկրների, ինչպես նաև շիայական ազդեցության տարածագոտում ընթացող հնարավոր քաղաքական, կրոնական և սոցիալ-

մշակութային բնագավառներում ընթացող զարգացումների վերլուծության և համարժեք արձագանքման և քաղաքականության մշակման համար:

**Ուսումնասիրության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի կողմից, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ ՀՀ ԲԿԳԿ կողմից հավանության արժանացած գրախոսվող գիտական պարբերականներում, Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գրքի գլխում (book chapter), այլ հրատարակություններում տպագրված հոդվածներում: Ատենախոսությունում ընդգրկված տարբեր խնդիրներ և թեզեր ներկայացվել են նաև հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև մասնագիտական ֆակուլտետում իրականացված դասախոսությունների և սեմինարների շրջանակում:

**Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:** Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության համար սկզբնաղբյուր է ընտրվել Բեյրութում 1967թ. հրատարակված Սուբհի Ալ-Սալեհի խմբագրական Ալի Իբն Աբի Տալիբին պատկանող Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից գրավոր ժողովածուի քննական հրատարակությունը<sup>2</sup>: Այս հրատարակությունն ակադեմիական և գիտական շրջանակներում և համալսարաններում ամենից կիրառված և ընդունելի քննական խմբագրությունն է, որն արվել է ժամանակագրորեն Ալ-Շարիֆ Ալ-Ռադիին մոտ ձեռագրերի հիման վրա:

Ատենախոսությունը շարադրվել է նաև այլ արաբերեն սկզբնաղբյուրների, անգլերեն, ռուսերեն, հայերեն մենագրությունների, մեկնաբանությունների, հոդվածների, հանրագիտարանների, գիտական մի շարք կոնֆերանսներում հնչած բանախոսությունների, մասնագիտական գրականության և գիտական հոդվածների հիման վրա: Նախջ ալ-բալադայի մի շարք խմբագրություններից ժամանակագրորեն ամենավերջին քննական խմբագրությունը և թարգմանությունը 2024թ. Տահերա Կութբուդդինի կողմից արված աշխատանքն է<sup>3</sup>:

Նախջ ալ-բալադայի՝ աշխարհի տարբեր երկրներում պահվող ձեռագրերի ցանկի վերաբերյալ տեղեկատվությունը մենք ստանում ենք հայտնի շիա գիտնական Ալամա Տաբատաբայից, ըստ որի մինչ օրս հայտնի է 11-ից 18-րդ դարերի ավելի քան

---

<sup>2</sup> al-Sharīf al-Raḍī, editor. Nahḡ al-balāghā . Edited by Ṣubḥī al-Ṣāliḥ, Dār al-Hijra, 1967, pp. 560.

<sup>3</sup> Qutbuddin, Tahera, editor and translator. Nahj al Balaghah: The Wisdom and Eloquence of ‘Alī: A Parallel English Arabic Text. Islamic Translation Series, vol. 15, Leiden: Brill, 2024. pp. 1010

172 ձեռագիր<sup>4</sup>: Տ. Կուլթուրիին իր քննական աշխատանքը կատարել է 11-13-րդ դարերի ամենից վաղ և Ալ-Ռադիի տարբերակին մոտ եղած ձեռագրերի հիման վրա՝ օգտվելով 5 հիմնական և 9 երկրորդային ձեռագրերից, որոնց ցանկը ներկայացվում է ատենախոսության առանձին հավելվածում:

Ժողովածուն թարգմանվել է աշխարհի ավելի քան 15 լեզուներով պարսկերեն (ամենահին թարգմանությունը՝ Ֆաթհալլահ Քաշանիի (մահ. 988/1580թթ.) Tanbih al-ghāfilīn («Անուշադիլների զգուշացումը») աշխատությունը), ուրդու, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն, իտալերեն, ռումիներեն, լեհերեն, խորվաթերեն, դազախերեն, չինարեն և այլն:

Աշխատանքի մեկնաբանությունների՝ *շարհերի* քանակը անցնում է հարյուրից, որոնցից ամենից տարածվածները և հայտնիներն են՝ Իբն Աբի Հադիդի 20 հատորյակը<sup>5</sup>, Ալի իբն Մայսամ Ալ-Բահրանիի<sup>6</sup>, Քուֆթ Ալ-Ռավանդիի<sup>7</sup>, Մուհամմադ Աբդուլի<sup>8</sup>, Հուսեյն իբն Շահահ դին Ալ-Քարխիի<sup>9</sup>, Մուհամմադ իբն Ալ-Հասան Ալ-Քադերիի և Ժամանակագրորեն ավելի ուշ շրջանի Հաբիբ Ալլահ Ալ-Խոյի<sup>10</sup> աշխատանքները:

Նաև ալ-բալադայի գիտական ատենախոսություններից կնշենք Ուարիս Հասանի<sup>11</sup> ատենախոսությունը, որն անդրադառնում է տեքստի հեղինակության հարցերին:

Շիա իսլամի ծագման և զարգացման, ինչպես նաև իմամ Ալի իբն Աբի Տալիբի պատմագրական մի շարք կարևոր հետազոտություններ ինչպիսիք են Ու. Մադելունգի<sup>12</sup>, Է. Պետերսոնի<sup>13</sup>, Է. Նյումանի<sup>14</sup>, Հ. Հալմի<sup>15</sup>, Է. Կուլբերգի<sup>16</sup>,

---

<sup>4</sup> **Ṭabāṭabā`ī**, **‘Abd al-‘Azīz** “Al-Mutabaqā min makḥṭūṭāt Nahj al-balāghah,” pp. 62–102; **Mā tabaqāqā min makḥṭūṭāt Nahj al-balāghah**, pp. 13–36; **Fī Rihāb Nahj al-Balāghah: Makḥṭūṭātuha**, pp. 3–20.

<sup>5</sup> **Ibn Abi al-Hadid**, **Sharḥ Nahj al-Balāgha**. Edited by Muḥammad ‘Abd al-Karīm al-Nemrī, Dār al-Kutub al-‘Ilmiyya, Beirut, 1418 AH/1997 CE.

<sup>6</sup> **al-Bahrani, Ali ibn Maytham (Kamal al-Din). Sharḥ Nahj al-Balaghā.**

<sup>7</sup> **al-Rawandī, Sa`īd ibn Hibat Allāh.** *Minḥāj al-barā`ah* fi Sharḥ Nahj al-balāghah. Maktabat Āyat Allāh al-Mar`ashi al-Āmmah, Qum, 1406 AH/1985 CE.

<sup>8</sup> **Abduh, Muḥammad**, editor. *Nahj al-Balaghā*. Cairo, al-Manar Press, 1905.

<sup>9</sup> **al-Karkhi, Husain ibn Shahab al-Din**, *Sharḥ Nahj al-Balaghā*.

<sup>10</sup> **al-Khu`ī, Sayyid Ḥabīb Allāh Ḥāshimī.** *Minḥāj al-barā`ah* fi Sharḥ Nahj al-balāghah. Bunyād-i Farhangi-i Imām al-Mahdi, Qum, 1406 AH/1985 CE.

<sup>11</sup> **Waris Hasan, Syed M.**, 1994, *A Critical Study of Nahj Al-Balāgha*, PhD thesis, Edinburgh University, 1979.

<sup>12</sup> **Madelung, Wilferd**, *The Succession to Muḥammad: a study of the early caliphate*. New York, 1997.

Հ. Կորբենի<sup>17</sup>, Մ. Մոմենի<sup>18</sup> և այլոց, ինչպես նաև իսլամի հայտնի հանրագիտարանների Ալի Իբն Աբի Տալիբի վերաբերյալ հատվածները<sup>19</sup>: Ժողովածուի հավաքող-հեղինակ Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կենսագրության, ժամանակաշրջանի և իսլամական կրոնաիրավական ուսմունքի ձևավորման փուլերի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել այդ ժամանակաշրջանը արտացոլող մի շարք կարևոր հեղինակների՝ Մ. Ջեբլի<sup>20</sup>, Ու. Ալթարի<sup>21</sup>, Ս. Ստետկենկիչի<sup>22</sup>, Ալի Իսլամի<sup>23</sup>, Ի. Աբբասի<sup>24</sup>, Ռեզա Քազեմի<sup>25</sup>, Ա. Լալանի<sup>26</sup>, Տահերա Կոթբուդինի<sup>27</sup>, Ռ. Մասթերտոնի<sup>28</sup>, Ա. Ինլյոսի<sup>29</sup> և այլոց աշխատանքները:

<sup>13</sup> **Petersen, E.I.**, ‘Ali – and Mu ‘awiya in Early Arabic Tradition: studies on the genesis and – growth of Islamic historical writing until the end of the ninth century, Copenhagen, 2008.

<sup>14</sup> **Newman, Andrew, J.**, The Formative Period of Twelver Shi‘ism: Hadith as Discourse between Qum and Baghdad, Curzon press, 2000.

<sup>15</sup> **Halm, Heinz.** The Shiites: A Short History. Princeton, NJ: Markus Wiener Publishers, 2007.

<sup>16</sup> **Kohlberg, Etan.** "From Imamiyya to Ithna‘ashariyya." Bulletin of the School of Oriental and African Studies, vol. 39, 1973

<sup>17</sup> **Corbin, Henry.** History of Islamic Philosophy. London: Kegan Paul International, 1964.

<sup>18</sup> **Momen, Moojan.** An Introduction to Shi‘i Islam: The History and Doctrines of Twelver Shi‘ism. New Haven, CT: Yale University Press, 1985

<sup>19</sup> **Manouchehri, F. , Melvin-Koushki, M. , Shah-Kazemi, R. , et al** “ ‘Ali – b. Abi – Talib – ” Encyclopaedia Islamica, **Reza Shah-Kazemi**, ‘Ali ibn Abi Talib, Medieval Islamic Civilization: An Encyclopaedia, The Institute of Ismaili Studies, ‘ALĪ B. ABĪ TĀLEB Article by **Poonawala, Ismail K. , Kohlberg, Etan** , Encyclopaedia Islamica. Ислам: Энциклопедический Словарь. М., 1991.

<sup>20</sup> **Moktar, Djebli**, “al-Sharif al-Raḍī”, in: Encyclopaedia of Islam, Second Edition, Edited by: P. Bearman, Th. Bianquis, C.E. Bosworth, E. van Donzel, W.P. Heinrichs, pp. 340-343;

<sup>21</sup> **Akhtar, Waheed S.** Early Shi‘ite Imamiyyah thinkers, New Delhi, Ashish Pub. House, 1988.

<sup>22</sup> **Suzanne P. Stetkevych**, Al-Sharif al-Raḍī and Nahj al-balāghah: Rhetoric, Dispossession, and the Lyric Sensibility, Journal of Arabic Literature 50(3-4), November 2019, pp. 211-250.

<sup>23</sup> **Ali, Islam Abu**, Al-Sharif Al-Radi, Durham theses, Durham University, 1974.

<sup>24</sup> **Abbas, Ihsan**, al-Sharif al-Radi, Beyrut 1959.

<sup>25</sup> **Shah-Kazemi, Reza**, Justice and Remembrance: Introducing the Spirituality of Imam ‘Ali, London: I.B. Tauris, 2006.

<sup>26</sup> **Lalani, Arzina R.** Early Shi‘i Thought: The Teachings of Imam Muhammad al-Baqir. London: I.B. Tauris, in association with The Institute of Ismaili Studies, 2004.

<sup>27</sup> **Qutbuddin, Tahera**, editor and translator. A Treasury of Virtues: Sayings, Sermons, and Teachings of ‘Ali (with the One Hundred Proverbs attributed to al Jāhiz). Library of Arabic Literature, New York: New York University Press, 2013. **Qutbuddin, Tahera**. “A Sermon on Piety by Imam ‘Ali ibn Abi Tālib: How the Rhythm of Classical Arabic Oration Tacitly Persuaded.” Religion and Aesthetic Experience: Drama—Sermons—Literature, edited by Sabine Dorpmüller, Jan Scholz, Max Stille, and Ines Weinrich, Heidelberg: Universitätsverlag Winter, 2018.

<sup>28</sup> **Masterton, Rebecca.** Shi ‘i Spirituality for the Twenty-First Century. Light Reading, 2020.

Մինչիսլամական Արաբիայի բանավոր մշակույթից դեպի գրավոր քաղաքակրթական համակարգի անցման, շիա իսլամին առնչվող հայերեն գիտական հեղինակներից արժեքավոր են Դ. Հովհաննիսյանի<sup>30</sup>, Հ. Քոչարյանի<sup>31</sup>, Գ. Մկրտումյանի<sup>32</sup>, օտարալեզու հեղինակներից՝ Հ. Բերգի<sup>33</sup> Ու. Օնգի<sup>34</sup>, Գ. Շոելերի<sup>35</sup> և այլոց աշխատանքները: Բուհների դինաստիայի ժամանակաշրջանի պատմաքաղաքական, կրոնական, սոցիալական և մշակութային միջավայրի ժամանակահատվածի ուսումնասիրության համար կարևոր են եղել մի շարք հեղինակներ՝ Զ. Կրամերի<sup>36</sup>, Ռ. Մոթահեդդեի<sup>37</sup>, Մ. Բար-Աշերի<sup>38</sup>, Կ. Կահենի և Չ. Պալլեի<sup>39</sup>, Զ. Դոնոհյուի<sup>40</sup>, Վ. Մինորսկիի<sup>41</sup>, Հ. Ամեդրոզի<sup>42</sup> և այլոց աշխատանքները:

Ատենախոսության մեջ առանձին ենթազխով անդրադառնում ենք միջնադարում Նահջ ալ-բալադային անդրադարձած սուննի մի շարք հեղինակների՝ Իբն Խալիքանի<sup>43</sup>, Իբն Թայմիյայի<sup>44</sup>, Ալ-Ղահաբիի<sup>45</sup>, Ալ-Սաֆադիի<sup>46</sup>, Ալ-Յաֆիի<sup>47</sup>, Ալ-

<sup>29</sup> **Inloes, Amina**, Women in Shi'ism: Ancient Stories, Modern Ideologies, Was Imam 'Ali a Misogynist?: The Portrayal of Women in Nahj al-Balaghah and Kitab Sulaym ibn Qays, Journal of Shi a Islamic Studies, June 2015.

<sup>30</sup> **Հովհաննիսյան Դ.**, «Աղաբը» որպես ինֆորմացիոն հոսքերի ադապտացման գործիք, Արաբագիտական ուսումնասիրություններ, 2018, էջ. 201-213.

<sup>31</sup> **Քոչարյան Հ.**, Ամիրու-լ-Մու'մինին ինստիտուտին վերաբերող որոշ հարցեր // «Արևելագիտության հարցեր», հ. 6, Երևան 2006, էջ 242-247:

<sup>32</sup> **Մկրտումյան Գ.**, Մուսուլմանների կողմից տրված հրովարտակ-պայմանագրերի դերը քրիստոնյան բնակչության կյանքում, Արևելագիտության հարցեր, 14, 2014թ., 14-27:

<sup>33</sup> **Berg, Herbert**. The Development of Exegesis in Early Islam: The Authenticity of Muslim Literature from the Formative Period. London; New York: Routledge, 2013

<sup>34</sup> **Ong, Walter J.** Orality and Literacy: The Technologizing of the Word. London and New York: Routledge, 1991.

<sup>35</sup> **Schoeler, Gregor**. The Oral and the Written in Early Islam. Translated by Uwe Vahelpohl, edited by James E. Montgomery, London; New York: Routledge, 2006.

<sup>36</sup> **Kraemer, L. Joel**, Humanism in the Renaissance of Islam: The Cultural Revival During the Buyid Age, Brill Paperbacks, 1992..

<sup>37</sup> **Mottahedeh, Roy**, Loyalty and Leadership in an early Islamic society, I.B. Tauris, 2001.

<sup>38</sup> **Bar-Asher, M.** Scripture and Exegesis in Early Imāmi Shiism. Leiden: E.J. Brill, 1999.

<sup>39</sup> **Cahen, Claude; Pallet, Charles**, “Buwayhids or Buyids”, Encycloaedia of Islam 2.Vol 1.

<sup>40</sup> **John J. Donohue**, The Buwayhid Dynasty in Iraq 334H./945 to 403H./1012, Shaping Institutions for the Future, Brill, 2003.

<sup>41</sup> **Minorosky V.**, “The Iranian Intermezzo,” in Studies in Caucasian History, pp. 110-116.

<sup>42</sup> **Amedroz, H.F.**, Three Years of Buwaihīd Rule in Baghdad. In JRAS, vol 33, issue 3, 1901.

<sup>43</sup> **Ibn Ḥalikān**, Wafayat al-A'yan, 1/423.

<sup>44</sup> **Ibn Taymiyyah**, Minhāj al-Sunnah al-Nabawiyyah, 4/24:

<sup>45</sup> **Mizān al-Ṭ' tidāl**, Šams al-Din al-Ḍahabī, 4 volumes, Cairo, 1963.

<sup>46</sup> **Al-Šafadī**, Al-Wāfi bi al-Wafayāt, 2, Istanbul, 1949.

<sup>47</sup> **Al-Yāfi 'ī**, Mir'āt al-Jinān, Dar al-kutub al- 'Imiya, Beirut.

Ասկալանի<sup>48</sup> կողմից Նահջ ալ-բալադայի վերաբերյալ կասկածների ի հայտ գալուն և նրանց հիմնավորումներին: Հետագայում, երբ 19-րդ դարի վերջին 20-րդ դարում սկսվեցին արևմտյան հեղինակների առաջին աշխատանքներն այս թեմայով, դրանց նույնպես բնորոշ էր միջնադարյան սուննի հեղինակների կասկածների հետ համընկնող թեզերը: Այդպիսի հեղինակներից էին Կառլ Բրոկելմանը<sup>49</sup>, Քլեմեն Հյուարը<sup>50</sup>, Համիլթոն Գիբբը<sup>51</sup>, Ահմադ Ամինը<sup>52</sup>, Ջամիլ Սուլթանը<sup>53</sup>, Սաֆա Խուլուսին<sup>54</sup> և այլոք: Միայն 20-րդ դարի վերջերից և 21-րդ դարում արդեն գերակա է այն տեսակետը, որ Ալ-Շարիֆ Ալ-Ռադիին հավաքել և գրի է առել Ալի իբն Աբի Տալիբի խոսքերը, իրեն հասանելի աղբյուրներից, և հետազոտողների նոր շրջանակ է կազմավորվում (Տահերա Կութբուդդին, Սյուզան Ստետկլիչ, Ռեզա Շահ Քազեմի, Մոկթար Ջեբլի և այլոք), ինչն էլ հանգեցնում է արդեն այլ մեթոդներով և ուղղվածությամբ Նահջ ալ-բալադայի հետազոտությունների իրականացման հնարավորությանը:

Նահջ ալ-բալադայի ուսումնասիրությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական ուղղության: Առաջինը ներառում է բուն աղբյուրագիտական հիմքերը բացահայտելուն միտված լուրջ ձեռագրային և պատմա-քննադատական աշխատանքները, իսկ երկրորդը՝ միջդիսցիպլինար ուսումնասիրությունները, որոնք առաջնահերթություն են տալիս հենց աղբյուրի տեքստի բովանդակային վերլուծությանը:

#### **Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

**Ներածության** մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտության գիտական նորոյթը, թեմայի ժամանակագրական շրջանակը, ներկայացվում են աշխատության փորձաքննությունը, ինչպես նաև հետազոտության աղբյուրագիտական հիմքի, հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանի և գրականության համառոտ տեսության ենթաբաժինները:

---

48 **Ibn Hajar al-Asqalanī**, Lisān al-Mizān, 4/ 223.

49 **Brockelmann, Carl**, The History of Arabic Written Tradition, Brill, 2023.

50 **Huart, Clement**, A History of Arabic Literature, London 1903.

51 **Gibb, H.A.R.**, Arabic Literature, Oxford, 1963.

52 **Amīn, Aḥmad**, Fajr al-Islām, vol 1, Cairo, 1928.

53 **Khulūṣī, Ṣafā**. The authenticity of Nahj al-Balagha, Islamic Review, October 1950, pp 31-55.

54 **Sultan, Jamil**, Etude sur Nahj al-Balagha, Paris, 1940.

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «**ԻՄԱՄ ԱԼԻ ԻԲՆ ԱԲԻ ՏԱԼԻԲԸ ԵՎ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ**», որի առաջին «*Ալի իբն Աբի Տալիբը՝ որպես շիայականության կրոնագաղափարական ուսմունքի անկյունաքարային կերպար*» վերնագրված ենթագլխում ներկայացվում է Ալի Իբն Աբի Տալիբի դերը իսլամի ծագման շրջանում, քննության են առնվում սուննի և շիա իսլամի դավանաբանական ուսմունքների հետագա ձևակերպման ընթացքում Ալիի դերակատարման և դրա տարբեր ընկալումները, գերագույն իշխանության հարցը և շիա իսլամում *բադիին՝* ներքին իմաստների մեկնաբանման գործընթացի կարևորությունը: Առաջին գլխի երկրորդ՝ «*Արձակ-բանաստեղծական սինկրետիկ բանավոր մշակույթից գրավորի վերածման ուղին*» խորագրով ենթագլուխը անդրադառնում է բանավոր ավանդույթից դեպի գրավոր ձևակերպման գործընթացին:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ վերնագրված «**ԱԼ-ՇԱՐԻՖ ԱԼ-ՌԱԴԻՆ. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՆԱՀՋ ԱԼ-ԲԱԼԱԴԱՆ**», վեր է հանում է հավաքող-հեղինակի ապրելու շրջանում պատմա-քաղաքական, կրոնական, մշակութային ողջ իրադրությունը Նահջ ալ-բալադայի ստեղծման համատեքստում: Առաջին՝ «*Աբբասյան խալիֆայության ապակենտրոնացման և Բուհնեթի կառավարման ժամանակաշրջանը. կրոնա-քաղաքական և սոցիալ-մշակութային իրադրությունը*» ենթագլխում քննության են առնվում Աբբասյան խալիֆայության ապակենտրոնացման ժամանակաշրջանում տեղի ունեցող կրոնա-քաղաքական և սոցիալ-մշակութային փոփոխությունները, որոնք էլ հանգեցրան են խալիֆայության նոմինալ գերիշխանության ներքո նոր դինաստիաների կառավարմանը՝ ստեղծելով հատկապես շիա իսլամի համար դավանաբանական ուսմունքի հիմքերը ամրապնդող գործունեության համար պարարտ հող: Երկրորդ ենթագլուխը՝ «*Շիա իսլամի կրոնա-գաղափարական հիմքերի ինստիտուցիոնալացումը Բուհնեթի օրոք*», վերլուծում է Բուհնեթի գերիշխանության շրջանում վարվող քաղաքականությունը և կրոնական, գրական, և գաղափարական նոր իրողությունների համար բարենպաստ միջավայրի ապահովման նախադրյալները, որոնք էլ հանգեցրին իմամության՝ ինստիտուցիոնալ կայացման անհրաժեշտությանը:

Երրորդ՝ «*Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կյանքը և գործունեությունը*» ենթագլխում ներկայացվում է Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կյանքի և գործունեության մանրամասները, նրա գրական, քաղաքական, սոցիալ-մշակութային և անձնական նկարագիրը՝ Նահջ ալ-բալադայի ստեղծման համատեքստում:

Ատենախոսության երրորդ՝ «**ՆԱՀՋ ԱԼ-ԲԱԼԱԴԱՆՅԻ ԿԱԶՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱԼ-ՇԱՐԻՖ ԱԼ-ՌԱԴԻԻ ԵՎ ԴԻԱՆՑ ՀԵՏԱԳԱ**

**ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ»** գլուխը կազմված է երկու ենթագլխից: «Նահջ ալ-բալադան՝ ըստ Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի նախաբանի» խորագրով առաջին ենթագլխում ներկայացվում են Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից տեքստը հավաքելու և մեկ ամբողջական ժողովածու դարձնելու նպատակադրության, ժանրային կառուցվածի հիմնավորման, կազմման համար որպես հիմք ճարտասանությունն ընտրելու և այլ հարցեր: Երկրորդ՝ «Նահջ ալ-բալադայի հետագա ընկալումները միջնադարից մեր օրեր» խորագրով ենթագլուխը վեր է հանում սուննիական միջնադարյան միջավայրում հատկապես 13-14-րդ դարերում աշխատության վերաբերյալ առկա կասկածների հետագիծը, որն իր ազդեցությունն է ունենում հետագայում արևմտյան գիտնականների կողմից նույն հիմքերով կասկածների ամրապնդմանը: Սակայն սկսած արդեն 20-րդ դարի վերջին քառորդից՝ շիա իսլամի հետազոտությունների քանակի և որակի աճին զուգընթաց, փոխվեցին հետազոտողների պատկերացումները և փաստարկման գործիքակազմը:

Ատենախոսության վերջին՝ չորրորդ **«ՆԱՀՋ ԱԼ-ԲԱԼԱԴԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ»** խորագրով ամենաձավալուն գլուխը կազմված է չորս ենթագլուխներից: Չորրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ **«Նահջ ալ-բալադայի դերը միջնադարյան արաբական գրական ժանրային կառուցվածքում»** անդրադառնում է ժողովածուի՝ շիա իսլամի հետևորդների կողմից ամենաընթերցված և ժողովածուի կիրառական դերին՝ ստեղծումից մինչև մեր օրեր: **«Նահջ ալ-բալադա աղբյուրի խուտբաները՝ որպես վաղ միջնադարի բանավոր հոեպորական մշակույթի կարևոր գործիք. պարմական համարեքսպը, կառուցվածքը և բովանդակությունը»** վերնագրված երկրորդ ենթագլուխը նվիրված է բանավոր շրջանի խուտբայի՝ քարոզ-ճառերի դերի վերհանմանը, միջնադարի բանավոր հոետորական մշակույթում կիրառությանը: Ենթագլխում ներկայացվում է Նահջ ալ-բալադայի խուտբաների բովանդակային և կառուցվածքային բեռնվածքը: Ատենախոսության չորրորդ գլխի երրորդ՝ **«Նահջ ալ-բալադա աղբյուրի ուղերձ-նամակների պարմական, տեքստաբանական և բովանդակային առանձնահատկությունները»** վերնագրված ենթագլուխն էլ ուսումնասիրում է ուղերձ-նամակների կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց բովանդակային ուղղվածությունները: Առանձին ենթագլուխ ներկայացվում է **«Իմամ Ալիի նամակը՝ հասցեագրված Մալիք Ալ-Աշթարին՝ որպես արդար կառավարման, կրոնական բարեպաշտության և աստվածավախության վաղիսլամական քաղաքական մտքի յուրօրինակ նմուշ»:** Չորրորդ գլխի չորրորդ ենթագլուխը, որը վերնագրված է **«Նահջ ալ-բալադա աղբյուրի իմաստությունների, ասույթների և թևավոր խոսքերի**

**կառուցվածքային, տեքստուրային և բովանդակային առանձնահատկությունները»** անդրադառնում է արդեն երրորդ ժանրին՝ իմաստնություններին և ասույթներին, որոնց ուսումնասիրության համար ընտրել ենք ֆուլկլորային տեքստի վերլուծության մեթոդը: Վերջին՝ **«Նահջ ալ-բալադայի և Ալ-Ջահիզի՝ իմամ Ալիի հարյուր ասույթների համեմատության փորձ»** վերնագրված ենթագլխում համեմատել ենք իմամ Ալիի երկու ժողովածուներում տեղ գտած իմաստնությունները՝ ցույց տալով դրանց ընդհանրությունները և տարբերությունները, ժողովածուները հավաքելու նրանց նպատակադրման տարբեր հիմքերը:

**Եզրակացությունում** ամփոփված են ատենախոսության հիմնական և առանցքային դրույթներն ու եզրահանգումները:

- 10-րդ դարի հայտնի շիա գիտնական և բանաստեղծ Ալ-Շարիֆ Ալ-Ռադիին իմամ Ալի իբն Աբի Տալիբի քարոզների, ուղերձների և իմաստնությունների մեկ ամբողջական ժողովածուի կազմման չափանիշ է ընտրել հետտորությունը, ճարտասանությունը՝ բալադան՝ վերնագրելով այն «Նահջ ալ-բալադա»՝ «Ճարտասանության ուղի»: Սրանով հեղինակը նպատակ է ունեցել ցույց տալ, որ Իմամ Ալիի խոսքերը՝ Ալլահի ճանապարհով անցնելու ամենակարճ ուղին է՝ Ղուրանից հետո՝ երկրորդ կարևորը: Ըստ շիաների՝ իմամները, իմամ Ալիի գլխավորությամբ Ալլահի նախախնամությամբ ունեին գերագույն իշխանությունը ստանձնելու առաքելությունը (Ուալի Ալլահ-Ալլահի մտերիմ, ընկեր, բարեկամ) և Ղուրանի՝ ներքին (բատին) իմաստները ճանաչելու և մեկնաբանելու իրավունքը:

- Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից 10-րդ դարում մեկ ժողովածուում իմամ Ալիի ժառանգությունը հավաքելու մի քանի նախադրյալներ կային, որոնցից էին բանավոր մշակույթի պահպանման և դարեդար փոխանցման գործուն մեխանիզմների առկայությունը, Աբբասյան խալիֆայության կենտրոնաձիգ իշխանության թուլացման պայմաններում «աշխարհիկ իշխանության» անցումը տարբեր, այս պարագայում շիա Բուհների դինաստիային, ինչն էլ «շիա իսլամի վերածննդի» հնարավորություն ընձեռեց՝ հանգեցնելով շիա իսլամի կրոնադավանաբանական ուսմունքի հիմնասյուների ամրագրմանը դավանաբանական կարևոր նշանակության աղբյուրներում, որոնց թվում էր նաև Նահջ ալ-բալադան:

- 13-14-րդ դարերում, երբ տեղի էին ունենում այսպես կոչված «սուննիական վերակենդանացման» գործընթացները, Նահջ ալ-բալադայի կազմումից երկու և կես դար հետո միայն, սուննի շրջանակների կողմից առաջ են քաշվում աշխատանքի վերաբերյալ առաջին կասկածները, որոնց թվում ամենից կարևորը խնադի՝

միջնադարյան տեքստի վավերականությունը և իսկությունը ստուգելու միակ գործիքի բացակայությունն էր: Այս ժողովածուն կազմվել էր Բուփների կառավարման շրջանում, երբ ազատ մտածողների, ռացիոնալիստական մտքի զարգացման մի փուլ էր և, ինչպես նշում էր սուննի ամենահեղինակավոր գիտնականներից Իբն Թայմիյան, «դա մի շրջան էր, երբ ոչ ոք հավաստիության մասին չէր անհանգստանում»:

- Նահջ ալ-բալադայի ժանրային կառուցվածքում ներառված արձակ-բանաստեղծական բանավոր ժանրային ձևերից՝ խոտբաները, ռիսալաները և հիքմաները, որոնք դարերի ընթացքում փոխազդեցությունների ենթարկվելով հանդերձ հասել էին 10-րդ դար արաբամուսուլմանական քաղաքակրթության անբաժանելի մաս էին, հեղինակ-կազմողը դրանք համադրել է մեկ ժողովածուում այնպես, որ կարողանա արտացոլել շիա իսլամի կարևորագույն դավանաբանական հիմքերի՝ թաուհիդ (միաստվածություն), Ղուրան, իմամաթ, ռալի/ռալայա, բատին, ադլ (արդարություն, արդարամտություն), թակուա (աստվածավախություն և բարեպաշտության) և այլ հասկացությունների հանրագումարը մեկ imamate discourse՝ իմամության հիմնաքարային գաղափարի շրջանակներում՝ ամրապնդելով իմամների կրոնա-քաղաքական իշխանության աստվածային իրավասությունը և Բարձրյալի շնորհած գիտելիքին հասնելու ճանապարհին՝ ներքին իմաստների գիտակցման մեջ կատարելության հասնելու ուղին:

- Ալ-Ռադին երեք ժանրերով կատարյալ նմուշների ընտրությամբ փորձել է ապահովել ազդեցիկությունը, մարդկանց սրտերին հասանելիությունը, կրոնա-էթիկական շերտով փոխանցել է արժեհամակարգային ուղերձը, իսկ պատմական շերտի առկայությամբ ստեղծել է համատեքստը, որը հաստատում է ուղերձի վավերականությունը՝ ի վերջո ամբողջ Նահջ ալ-բալադան դարձնելով «սակրալ» տեքստ, որը ոչ թե ադաբի ժանրի ստեղծագործություն է, որին կարելի է հետևել, կամ չհետևել, այլ պարտադիր, քանի որ իմամ Ալի իբն Աբի Տալիբին է պատկանում՝ «Ալին է ասել»՝ ուրեմն ճշմարիտ ուղի է՝ ներքին իմաստներին հասնելու կատարելության ճանապարհ:

- Վերլուծելով Նահջ ալ-բալադա ժողովածուի հիմնական երեք ժանրերի՝ խոտբաների, ռիսալաների և հիքմաների առանձնահատկությունները և կատարելով դրանց համեմատական բովանդակային վերլուծություն՝ եզրահանգում ենք, որ Նահջ ալ-բալադան բավականին բարդ և բազմաշերտ տեքստ է՝ և՛ ունիվերսալ, և՛ իսլամական, և՛ քաղաքական, և՛ էթիկական, և՛ վարչարարության ուղերձներ, և՛ բարեպաշտություն քարոզ պարունակող՝ արտահայտված բանավոր ժանրին հատուկ ճարտասանության արվեստի տարրերով: Սակայն հեղինակ-

կազմողը նպատակ է ունեցել այդ բազմաշերտության մեջ ժողովածուն դարձնել մեկ միասնական կոռ համակարգ՝ շիա իսլամի դավանաբանական հիմնասյուների հիմնավորման և հետագա սերունդներին ժառանգելու համար:

## Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրապարակումները

1. Tatevik Mkrtchyan, Shi'a politics, “strategic culture” and Iran's relations with the South Caucasus, Agadjanian, A., Jödicke, A., & van der Zweerde, E. (Eds.). (2014). Religion, Nation and Democracy in the South Caucasus (1st ed.). Routledge. <https://doi.org/10.4324/9781315776804>, pp. 221-237. (Scopus).
2. Մկրտչյան Ս., Nahğ al-balāğā-ի հավաքագրման, վերնագրման, բովանդակության ընտրության եվ կառուցվածքային որոշ հարցերի պարզաբանումը՝ ըստ հավաքագրող-հեղինակ ալ-Շարիֆ ալ-Ռադիի նախաբանի, Արևելագիտության հարցեր, 11, Երևան, 2016թ. էջ. 50-65:
3. Մկրտչյան Ս., Nahğ al-balāğā-ի ուղերձ-նամակների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունների շուրջ, Արաբագիտական ուսումնասիրություններ, 10, Երևան, 2018թ. էջ 163-176:
4. Մկրտչյան Ս., «Նահջ ալ-Բալաղան» որպես 10-րդ դարի շիա իսլամի կնորագաղափարական հիմքերի ուսումնասիրման աղբյուր, Արևելագիտության հարցեր, 2020, XVIII, էջ. 17-34:
5. Մկրտչյան Ս., Իմամ Ալիի նամակը Մալիք Ալ-Աշթարին՝ որպես արդար կառավարման, կրոնական բարեպաշտության և աստվածավախության յուրօրինակ մի նմուշ, Արևելագիտության հարցեր, 2022, 22, էջ. 50-61:

## Թեմայով այլ հրապարակումներ

6. Մկրտչյան Ս., Nahğ al-balāğā-ի «հեղինակային» խնդրի քննարկումը միջնադարյան սուննի գիտնականների շրջանում, Արաբագիտական ուսումնասիրություններ, Հատոր 7, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ. 160-182:
7. Tatevik Mkrtchyan, Iran's soft power policy in Armenia: Cultural diplomacy and religion, Jödicke, A. (Ed.). (2017). Religion and Soft Power in the South Caucasus (1st ed.). Routledge, <https://doi.org/10.4324/9781315206721>. pp. 170-187. (Scopus).
8. Մկրտչյան Ս., «Նահջ ալ-Բալաղան» ժողովածուի ասույթների և իմաստուն խոսքերի կառուցվածքային բովանդակային որոշ առանձնահատկությունների քննարկու, Մերձավոր Արևելք, Երևան, XIV, 2019 էջ. 90-105:
9. Մկրտչյան Ս., Ալ-Շարիֆ ալ-Ռադիի ժամանակաշրջանը և Նահջ ալ-բալաղան, Մերձավոր Արևելք, 2021, XV, էջ. 159-183:

TATEVIK SOKRAT MKRCTHYAN

“NAHĠ AL-BALĀĠA AS AN EARLY SOURCE OF SHĪ'Ī ISLAM STUDIES”

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of “Historiography, Bibliography” 07.00.05.

The defense of the dissertation will take place on February 27th 2026, at 14:00 at the meeting of the HESC Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

### SUMMARY

Nahj al-Balāgha is a carefully compiled anthology of sermons, letters, and wisdom sayings traditionally attributed to the fourth Rightly Guided Caliph and the first Shi'a Imam, 'Alī ibn Abī Ṭālib (d. 661 CE). Compiled in the tenth–eleventh centuries by al-Sharīf al-Raḍī under Buyid rule, it is widely regarded as one of the most significant texts of Shi'a Islam after the Qur'ān, distinguished by its theological, ethical, philosophical, and political depth.

The dissertation consists of an Introduction, Four chapters, a Conclusion, References, and Annexes. The Introduction defines the relevance and scholarly novelty of the research, outlines its theoretical and methodological framework, and reviews the source base.

The first chapter, 'Alī ibn Abī Ṭālib as the Cornerstone of Shi'a Religious and Ideological Thought, establishes Imam 'Alī as the central figure in the formation of Shi'a concepts of authority and guidance. The subsection The Question of Supreme Authority addresses Shi'a interpretations of leadership after the Prophet's death, emphasizing the doctrine of the divinely designated imamate. This is complemented by Bāṭiniyya and the Process of Its Formation, which examines the emergence of esoteric interpretation and the belief in the Imam's exclusive access to the inner meanings of revelation. The chapter concludes by situating these ideas within the broader shift From Syncretic Oral Prose-Poetic Culture to Written Transmission, highlighting the cultural background of later compilations such as Nahj al-Balāgha.

Building on this doctrinal and cultural foundation, the second chapter, Al-Sharīf al-Raḍī: Historical Context and Nahj al-Balāgha, places the compilation of the work within the political and intellectual conditions of Abbasid decentralization and Buyid rule. Particular attention is given to the pluralistic scholarly environment of the period, as well as to al-Sharīf al-Raḍī's life, intellectual formation, and motivations as compiler.

The third chapter, titled The Aims of Compiling Nahj al-Balāgha According to al-Sharīf al-Raḍī and Its Later Reception, turns to al-Raḍī's own understanding of the work, as articulated in his preface, with an emphasis on Imam ʿAlī's eloquence and moral authority. It then traces the Reception of Nahj al-Balāgha from the medieval period to the present, noting its shifting status from a literary masterpiece to a major theological and ethical source.

The analytical focus deepens in the fourth chapter The Structure and Content of Nahj al-Balāgha, with its four subchapters, which examines the internal organization and thematic diversity of the text. The subsection The Role of Nahj al-Balāgha in the Genre System of Medieval Arabic Literature highlights its hybrid character, combining sermons, epistles, wisdom literature, and political discourse. The sermons (khuṭbas) are analyzed as expressions of early Islamic rhetorical and ethical thought, while the letters are examined as documents of governance and political theory. Special attention is given to The Letter to Mālik al-Ashtar as a Model of Just Governance and Piety. The wisdom sayings (ḥikam) are discussed as concise formulations of ethical, philosophical, and spiritual insight, followed by A Comparative Attempt between Nahj al-Balāgha Sayings and al-Jāhīz's One Hundred Sayings of Imam ʿAlī, which highlights continuity and variation in the transmission of Imam ʿAlī's wisdom.

The Conclusion summarizes the main findings and underscores the importance of Nahj al-Balāgha for the study of Shiʿa theology, Arabic literary tradition, and medieval Islamic political ethics.

**ТАТЕВИК СОКРАТОВНА МКРТЧЯН**

**«НАХДЖ АЛЬ-БАЛАГА КАК РАННИЙ ИСТОЧНИК ШИИТСКОГО  
ИСЛАМСКОГО УЧЕНИЯ»**

**Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 – «Историография, источниковедение».**  
**Защита диссертации состоится 27-го февраля 2026 г. в 14:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.**

**РЕЗЮМЕ**

«Нахдж ал-Балага», антология проповедей, писем и изречений, традиционно приписываемых четвёртому праведному халифу и первому шиитскому имаму `Али ибн Аби Талибу (ум. 661). Составленная в X–XI вв. аш-Шарифом ар-Ради в эпоху правления Буидов, она считается одним из ключевых текстов шиитского ислама после Корана.

Диссертация включает введение, четыре главы, заключение, список источников и приложения. Во введении определяются актуальность, научная новизна, методологические основы и источниковая база исследования.

Первая глава `АЛИ ИБН АБИ ТАЛИБ КАК ОСНОВА ШИИТСКОЙ РЕЛИГИОЗНО-ИДЕОЛОГИЧЕСКОЙ МЫСЛИ, раскрывает роль имама `Али в формировании шиитских представлений о власти. Рассматриваются концепция божественно установленного имамата (вопрос верховной власти), становление эзотерической интерпретации (батиния и процесс её формирования), а также переход от устной традиции к письменной фиксации раннеисламского наследия.

Логическим продолжением данного анализа становится вторая глава АШ-ШАРИФ АР-РАДИ: ИСТОРИЧЕСКИЙ КОНТЕКСТ И «НАХДЖ АЛ-БАЛАГА», где работа помещается в условия децентрализации Аббасидского халифата и интеллектуального подъёма эпохи Буидов, а также рассматривается научная деятельность составителя.

В третьей главе ЦЕЛИ СОСТАВЛЕНИЯ «НАХДЖ АЛ-БАЛАГА» И ЕГО ПОСЛЕДУЮЩЕЕ ВОСПРИЯТИЕ анализируются установки аш-Шарифа ар-Ради,

изложенные в предисловии, и прослеживается история восприятия текста от средневековья до современности.

Четвёртая глава СТРУКТУРА И СОДЕРЖАНИЕ «НАХДЖ АЛ-БАЛАГА» КАК ИСТОЧНИКА, посвящена жанровому и тематическому анализу произведения. Рассматривается его синтетический характер, проповеди как форма риторической культуры, письма как источники политической мысли, «Письмо Малику ал-Аштару» как модель справедливого правления, а также афористические изречения и их сопоставление с компиляцией аль-Джахиза.

В заключении подводятся итоги исследования и подчёркивается значение «Нахдж ал-Балага» для изучения шиитского богословия, арабской литературы и средневековой исламской политико-этической мысли.